

ՄԱՐՏԻՐԱՍՈՒԹԻՒՆ ՍՐԳՈՅՆ ԶՈՐԳՍԵՄԵՐ

(Անտիպ քատրերգութիւն. հանեալ 'ի Հասարակաց Գրատունէն Վեկետկոյ) :

Հետեւեալ Թատրերգութիւնն, որ Մարտիրոսաւոյն Սրբոյն Հռիփսիմեայ անունը կը կրէ, շինուած է ներկայացուած է առաջին, գուցէ նաև վերջին անգամ՝ մեր Լեհահայ եղբարց թշուառ և տագնապալից ժամանակի մը մէջ, յամին 1668, յորում դեռ Լեհահայոց եպիսկոպոսական աթոռոյն վրայ կը նստէր խռովութեանց առիթ հովիւ մը, Տէր Նիկողայոս Թորոսովիչ։ Մենք նոյն Թատրերգութիւնը կը հրատարակեմք 'ի Հանդիսիս, ուղղելով միայն ձեռագրին յայտնի վրիպակները, որք և օրինակողին անվարժութեանն ապացոյց են։ Օրինակն գը-

րուած է նօտր գրով և դիւրընթեանի. որոյ վերջին թղթոց վրայ կը գտնուի ցանկ՝ Թատրերգութեան անձինքը ներկայացընող ազգայնոց անուանց. յորոց մին ծանօթ է նաև հայ գաղթականութեան պատմութեան մէջ, իւր խաղացած նշանաւոր դերով, որ է վարդան Յունանեան Թոխաթեցի սարկաւազն, զոր նուիրակի մը հետ 'ի Լեհա ուղարկած էր Յակովբ Ջուղայեցի կաթողիկոսն. և հոն իւր խաղաղասէր բնաւորութեամբ ամենուն ընդունելի լինելով՝ քիչ ետքը յաջորդեց Նիկողայոսի։ Հետեւեալներն են կարգաւ նոյն ցուցակին մէջ նշանակուած անուններն։

ԱՆՁԻՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ

Յովհաննէս Ալանովիչ, Կամենիցացի. Գրիգոր Ներսեսովիչ, Լասլովացի. Գաբրիէլ Միխիրովիչ, Լուբինացի. Վարդան Յունանեան, Թոխաթեցի. Թէոդոր Աւգոստինովիչ, Լէոպոլսեցի. Սիմոն Բուզանովիչ, Լասլովացի. (ցի. Աստուածատուր Ներսեսովիչ, Լասլովա. Բաղտասար Բալովիչ, Կամենիցացի. Գաբրիէլ Ջախնովիչ, Լէոպոլսեցի. Յակովբ Մարգիէվիչ, Կամենիցացի.

Գրիգոր Գաբրիէլովիչ, Կամենիցացի. Անդրէաս Վալովիչ, Լասլովացի. Փլորիան Մինասեվիչ, Լասլովացի. Սիմոն Ջախնովիչ, Լէոպոլսեցի. Խաչատուր Հաճիովիչ, Լէոպոլսեցի. Ղազար Յակոբովիչ, Լասլովացի. Սիմոն Հաճիովիչ, Լէոպոլսեցի. Թովմաս Տարկոնիւրի, Բոտլագինացի, Ռափայէլ Կլովիւրի, Սիրադինացի.

Ներկայացուցեալ 'ի Քահանայապետական Դպրանոցի, ընդ վարչութեամբ կարգաւորացն Առաքելականաց՝ Թէա-

դինեան կոչեցելոց. 'ի Լէոպոլիս, յամի Տեառն 1668, յամանն դեկտեմբերի։

## Ա Ն Զ Ի Ն Ք

ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻՆՈՐԻԷ.

ՍՈՒՐԵ ՀՌԻՓՍԻՄԷ.

ՍՈՒՐԵ ԳԱՅԻԱՆԷ.

ՏԵԿԱՏ ԹԱԳԱՆՈՐ.

ԽՈՍՐՈՎԻՌՈՒՅՏ. քոյր քաջաշորին Տրդատայ.

ԿԱՐԷՆ, իշխան Տրդատայ և սիրող Հոփսիսիմէի.

ՏԻՄԱՍ, խորհրդակից Կարենի.

ԷՄԻԼԻՈՍ. Պատգամաբեր 'ի Հայաստան, 'ի կողմանէ Դիոկղետիանոսի Կայսեր.

ՕՏԱՏ, դայեակ խոսրովիդատոյ.

ԿԱՒԱՐԴ. ՄՈՆԴ. ՔՐՄԱՊԵՏ. ՔՐՄՈՒՆՔ.

ՏՂԱՏ մի, ժառայ խոսրովիդատոյ.

ԴԵՆ.

ԶԵՆՈՒՐՈՐՔ.

Տեսարանն է 'ի վաղարշապատ 'ի մայրաքաղաքն Հայաստանեայց:

## Ն Ե Ր Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

#### ՀՌԻՓՍԻՄԷ. ԳԱՅԻԱՆԷ

Հոփսիսիմէ. Հաստատեալ է, մայր. ոչ յաւէտ փախչիմ,  
Զոր հրամայեալ է՝ անստեղծ փեսայն իմ:  
Փախուստ արդելու այժմ. և 'ի սրտի  
Հռովմայականի՝ չէ յաւէտ արժանի  
Ամօթալից երկիւղ. 'ի նանիր տանջանաց  
Անկարող մարդոյ, 'ի պիղծ հարսանեաց  
Դիւպաշտ կայսեր, փախեայ մինչև աստ,  
Զի 'ի քո կարիցեմ յանարատ յառազաստ,  
Սէր իմ, մտանել յամբիւն: Ի սկզբանէ,  
Սիրելի, մի յամեր. ազատեա 'ի բանդէ  
Ծանրաբեռն մարմնոյս՝ զհարսըս տառապեալ.  
Լեր զթած:

Փայիսանէ. Զուարճանամ, դուստր սիրեցեալ,  
Տեսանել 'ի քեզ զցանկութիւնս՝ արժան  
Հարսին Քրիստոսի, որ աներկբայական  
Մտօք՝ արհամարհէ զահ բռնաւորաց՝

Որ զիարդ և իցեն՝ 'ի վերայ ոսկերաց :  
Արեան, մարմնոյն՝ սակաւ ինչ առնել  
Կարենան միայն . բայց չարչարել  
Զհողին 'ի նոցանէ անկախ՝ Ստեղծողին  
Գործ է միայնոյ : Արդ յետ մարտին  
Քոյ՝ պսակ, Հռիփսիմէ : Հանապազ տառապիլ  
Ընդ ծով և ցամաք, քաղցնուլ ծարաւիլ,  
Վտանդիլ, նեղանալ, փախչիլ՝ ինձ հաւատոյ,  
Քաջապէս և մարտիլ . քանզի քրիստոնեայ՝  
Պարտի աներկիւղ, իսկ ոչ անզգամ,  
Մատենել զանձն իւր . և 'ի տարաժամ  
Նախանձ՝ անհաճոյ է Աստուծոյ :

Հռիփսիմէ .

Գիտեմ,

ինքն քրիստոս բազում անգամ յիշեմ  
Փախեալ . իսկ 'ի ժամ յառաջ յաւիտենից  
Նշանակեալ, անճառ սիրովն՝ Հրէից  
Մատենաց զանձն իւր :

Գայիանէ .

Բայց ոչ զանձն իւր՝

Քեզ, թէ ժամ քո եհաս հաստատարար .  
Եւ զիարդ Տէր արգելու զքո փախուստ,  
• Որ տայ քեզ փախչելոյ ժամանակ :

Հռիփսիմէ .

Գալուստ

Մեր աստ՝ յետ յորով ամսոց փախըստեան,  
Զուր կարծելով մեզ տեղի հանգստեան  
Գրտանել . տեսանեմ ծառայից քրիստոսի  
Թաթաւեալ արեամբ զփողոց . անօրինի  
Տրդատոյ չարագործ, և զմեծ վաղարշապատ՝  
Ի զազիր տանջանարան փոխեալ . սա է խրատ,  
Ի վերուստ յայտնի՝ անվայել երկիւղիս  
Մերոյ, և ազդումն՝ թէ Հայոց երկրիս  
Պիտոյ է մեզ մարտիլ, նաև ընդ յաղթող  
Գրիգորի յաղթել զԺոխոց : Դու, սիրող  
Մայր, թոյլ տուր, զցանկութիւն զգաստ  
Մի՛ յամեցուցաներ . և եթէ աստ  
Անցանէ անողորմ թագաւոր, կարծեմ  
Թէ նորա է պաղատ այս . կամք են՝  
Մատուցեալ նմա բանիւ կշտամբել  
Ճմարտատեաց գազան . և ուսուցանել՝  
Թէ զոր նստուցին յաթոռ արքայական,  
Կարէ զօրք Հռովմայեցւոց, կարէ Հռովմայական  
Աղօլիկ, քրիստոսի զօրացեալ սիրով՝ յաղթել,  
Առնել ամօթ . և զկուռս՝ 'ի միխիւր փշրեալս՝  
Ի կոյր պաշտօնէի յօշո՛ղ զպաշտեալս  
Զաստուածըս ձգել :

Գայիանէ .

Ապա քաջալերեաց,

Հարազատ դուստր իմ . ջերմ փափագանաց  
Յաւէտ հակառակիլ չկարեմ . Աստուծոյ՝  
Որ զսիրտ քո շարժէ՝ անհաս խորհրդոյ

երկրպագեմ, և նովիմք վառեալ  
Հրով՝ մարտակից յասպարէղ պատուեալ  
Մտանեմ ընդ քեզ, (Չսուրբ խաչն ցուցանէ Հռիփսիմէ) :  
Հռիփսիմէ. Այսու նշանաւ,  
Գայիանէ, պարտել զիւրին է :  
Գայիանէ. Խախտեցաւ  
Նովիմք՝ մահուան խայթոց. բաւ է,  
Անյաղթ եմք : Բայց առ ընկերս պիտոյ է  
Թագչեալս 'ի հնձանս՝ խորհուրդ զհաստատեալս  
Յայտնել. նաև ահի թերևս հարեալս՝  
Յորդորական բանիւ հաստատել :  
Հռիփսիմէ. Հնազանդ  
Ահաւասիկ կամ, փութասցուք : Ջերմեռանդ  
Հառաչանաց իմոց լուր, փեսայ, և տուր  
Քեզ փառաւոր մահուամբ կեալ յայսմ աւուր :

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՐԿԱՏ. ԷՄԻԼԻՈՍ, ԶԽՈՌՈՐՔ

Էմիլիոս. Առ քեզ, թագաւոր մեծ, Հռովմայեցւոց  
Կայսր՝ քարտիզիւս դրէ խընդրուածոց .  
Փութապէս լրման սպասելով 'ի քենէ,  
Թէ շուտով ուղարկես զգտեալ Հռիփսիմէ :  
(Տրդաս կարգայ զթուղթն) :

« Բռնակալ տինգերաց  
Եւ աստուածորդոյն  
Դիոկղեսիանոս կայսր,  
Տրդատայ արքայի :  
Մերոց հրամանաց՝  
Այլիկ ասյստամբ,  
Հռիփսիմէ անուամբ,  
Առ քեզ, ասեն, զնաց .  
Անծուլ զնա խնդրեալ,  
Զգտեալ ուղարկեալ  
Առ մեզ յաստուածապատ :  
Գրեցաւ մեր պաղատ,  
Ի Հռոմ, յօգոստոսի  
Քսան և երրորդի :

Դիոկղեսիանոս » :

Տրդատ. Փութամ կայսեր զխնդրուածս կատարել .  
Եւ հրամայեմ՝ առժամայն խնդրել  
Յամենայն տեղիս տէրութեանց իմոց :  
Կոչեցէք զկարէն . աստուածայնոյ  
Կայսեր հայցուածք՝ ինձ հրամանք են :  
Բայց, Էմիլիոս, որ ծանուցանիցեն

Զփախստական աղջիկ՝ խնդրողաց,  
Ջնշանս՝ զոր ունիս՝ պատմեա :

Էմիլիոս . Է գեղեցկատեսիլ,  
Երով աչք , լայնաճակատ . բայց աշխատիլ  
Ձիւնչ յաւէտ է պիտոյ . գողացեալ զպատկեր  
Ինքեան Հռիփսիմէի՝ ի տանէ կայսեր՝  
Դիւրացուցանէ շքեղ գիւտ ցանկացեալ :  
(Տրդատ , առնելով զպատկերն) :

Տրդատ . Հաճոյ լինի պարգևս , և յիշատակեալ  
Լինի Էմիլիոս ի Տրդատայ :

Էմիլիոս . Բարեկամ  
Ձիւրական ոչ ինչ ունի . և իմանամ՝  
Թէ պարգևաց վերայ հաստատ սէր չհիմնի ,  
Այլ ի պարգևաց բազում անգամ սընի .  
Ձիարդ և իցէ՝ ընկալ և պահեա վասն իմ :

Տրդատ . Պահեցից զգուշապէս , խոստանամ , և լինիմ  
Յիշող տըւողիդ . նա և զՀռիփսիմէ  
Դիւրագոյն լիցի գտանել :

Էմիլիոս . Բարի է ,  
Փութացիր , աղերսեմ . և թոյլ տուր , արքայ ,  
Թէ պատասխանի տալ կայսեր Հռօմայ  
Դառնամ , զի սպասէ նա :

Տրդատ . Կամէի գրել .  
Իսկ եթէ դնաս . . . .

Էմիլիոս . Մնալ աստ առաւել  
Ձկարեմ . հրամանքն ունիմ ի նմանէ՝ դառնալ  
Շուտով :

Տրդատ . Ապա ի միտս քեզ իցէ՝  
Ջանխափան սէրն իմ՝ կայսեր յայտնել ,  
Իւ երախտեաց յիշումն՝ ի կատարել  
Թէ հոգամ զխնդրուած , և շուտ ուղարկեմ  
Ձմիւրեալն ոչխարն :

Էմիլիոս . Ձպարտիս իմ գիտեմ ,  
Բաւ է . ողջ լեր :

Տրդատ . Աստուածքն հասուցեն  
Անփորձ և անասան :

## ՏԵՍԱՐԱՆ Գ

ՏՐԴԱՏ . ԿԱՐԷՆ

Տրդատ . Ամենեքեան ելցեն .

Կարէն միտսցէ ընդ իս : Աստ մատիր ,  
Ձկայսեր խնդրուածս և զգիրս ընթերցիր :

(Կարէն ընթերնու զթուղթն . « Մերոց հրամանաց » , և այլն) :

Կարէն . Ձխնդրուածս կոչեա , արքայ , զոր հրաման  
Տեսանեմ յայտնի . ուստի ի հայաստան

իշխէ հրամայել կայսր . զվաղարշապատ  
 Ո՛վ խառնեաց ընդ Հոօմ՝ և զմեծ Տրդատ՝  
 Անամօթ գահճի ստորադրեաց :

Տրդատ . Զիր ինչ և կանչել

Տարածամ է , կարէն . շնորհել  
 երբեմն պարտ է բարեկամաց . և անտես  
 Շատ առնել . Տրդատ՝ պարտական է , զիտես ,  
 կայսեր :

Կարէն . Ո՛րչափ պարտական Տրդատայ  
 կայսր իցէ՝ գիտեմ : Երբժամ յառաջէր արքայ  
 փոքր ի շատէ՝ ասեմ , կոչէր զգողացեալ  
 Առ ՚ի մենամարտիլ . և ահի հարեալ  
 Հոօմայեցի՝ փախչիլ պատրաստ էր . յայնժամ  
 Ոչ էր ծառայ Տրդատ , այլ էր բարեկամ .  
 Եւ զոր դեռ ևս չունէր՝ արքունական  
 Թագ և ծիրանի տային , զի ՚ի կերպարան  
 Դիոկղետիանոսի յաղթիցէ Գլթաց ,  
 Արքայն՝ որպէս յաղթեաց , և ՚ի նախատանաց  
 Զվատթարասիրտն եհան : Եւ յորժամ նորա  
 փեսայ Լիկիանոս միւսանգամ . . .

Տրդատ . Լըռեա՛ ,  
 Միւսանգամ ասեմ , ամբարտաւան հպարտ .  
 Եւ առաւել իցէ կայսր , ոչ է պարտ  
 Քննել մեզ . բաւ է՝ թէ այսօր նորին  
 Զրիւ՝ Արշակունի զաւակ՝ վերբասին  
 Թաթուս հայկական նստի . և խոնարհ  
 Պարսիկ , որում յառաջ փոքր երևէր աշխարհ ,  
 Խաղաղասէր ստից պատուանդան եղև  
 Որդւոյս Խոսրովու :

Կարէն . Ամենայն՝ եղև  
 Այո՛ և կայսեր ձրիւ . թէ մոռանան ,  
 Թէ առ ՚ի փորձել զնախանձ իմ՝ հեշտանաս  
 Ճշմարտին երևիլ ներհակ . Տրդատայ  
 Թուիմ թէ ջատագով՝ ընդդէմ Տրդատայ  
 Ինքեան լինիմ . Թագաւորէ Տրդատ  
 Զրիւ կայսեր , նովաւ ևս է ազատ  
 Հայաստան ՚ի Պարսից : Թողութիւն արա ,  
 Դժուար է տանել . քան զայս լաւ ասա ,  
 Թէ Դիոկղետիանոս ձրիւ կայսր է  
 ՅԱրշակունիս : Արիւնս հեղեալ վկայէ  
 Այսքանիցս անգամ՝ առ ՚ի պահել նորա  
 Զգլուխ և զթագ : Այլ ևս հաւատոց  
 Թէ տուր մեծ ոչ էր , այլոյ ձեռաց  
 Թող տալ հանել զաշխարհս Հայաստանեայց ,  
 Որ նմա թագաւոր էր ծնեալ . սակայն  
 Յաստուածըս երդնում , եթէ միայն  
 Զօրք եղեալ էին կայսեր , և ազնիւքն ,  
 Անպարտ , հրաշագործ , ամենայաղթ արծիւքն՝

Թառաջ կարծեմ 'ի թեա հողմոց  
 Թռուցեալ էին , քան Հռովմայեցւոց  
 Զդրունս վաղարշապատի բանալ : Իսկ լուեալ  
 Ժողովրդեան քո , թէ կենդանի պահեալ  
 Խոսորովու որդի դոյր , անպատում է՝  
 Որ ուրախութեամբ շարժեալ սպանանէ ,  
 Հանէ փախուցանէ զտհի հարեալս Պարսիկս .  
 Եւ մուծեալ 'ի բերդս զորս Հռոմայեցիս  
 Անդադար կարդալով զանուն Տըրդատայ ,  
 Աղաղակէ . « Մեռցի պարսիկ մեր արքայ .  
 Տրդատ կեցցէ յաւիտեանս » : Աստի՜  
 Զի ապա դիտես զմնացեալն , երևի  
 Թէ տիրելն Տրդատայ ձիր իցէ՝  
 Հպարտ կոյսեր . իրաւ կարիցէ՝  
 Զփախըստական իւր՝ հրամայել Տրդատայ ,  
 Տրդատ խընդրել փութապէս :

Տրդատ .

Ասացեր , Անահտայ  
 Գոհութիւն . խրատես զիս համբեր լինել :  
 Կոմիմ կոյսեր յուէտ համբերել .  
 Իքենէ արդեօք պարտ է՝ նախանձու ,  
 Որ զքեզ 'ի տարածամ շարժէ . իսկ այսու

(Տայ նմա զպատկեր Հռիփսիմէ) .

Խողաղանաս , դիտեմ . սա է պատկեր աղջկան՝  
 Զոր կոյսը խընդրէ , սա է փախըստական՝  
 Զոր կոյսը սիրէ . զինչ թուի քեզ :

Կարէն .

Արժան  
 Աստուծոյ սիրողի թուի թէ նա իցէ .  
 Թէ ես Տրդատ չկարիցէ  
 Իրաւ ուղարկել արտաքս :

Տրդատ .

Լաւ ասացի .  
 Փոփոխեալ է Կարէն , և Հռոմայեցի  
 Եղև իսկոյն :

Կարէն .

Որ զՀպարտութիւն  
 Կոյսեր ատեմ , զմեծասրտութիւն  
 Խնայել , յաղթեալ լինել , բարեկամաց  
 Հաւատարիմ , 'ի մահ վերայ հայրենեաց՝  
 Անեղիկիւ մատնել զինքն , իւր զկեանս՝  
 Ազատութեան յաղադա՝ անփոյթ տունել , զնշան  
 Եւ այլս համար գեր քան զհողեղէն  
 Նիւթոյ զօրութեան՝ միշտ 'ի Հռոմ Կարէն  
 Երկնաւորօք հանդերձ պատուեսցէ :

Տրդատ .

Բաւ է .  
 Զիս եթէ սիրես , զաղջիկն Հռիփսիմէ  
 Ընդ ցամաք ընդ ծով պիտոյ է խընդրել ,  
 Կամայ թէ ակամայ առ Տըրդատ ածել  
 Շուտով . զի պատկերս շատ աստ գործեաց .  
 Մի յամեր , աղերսեմք :

Կարէն. Նախագաղափարաց  
Աննաման գտանին պատկերք բազում  
Անգամ, և . . .

Տրդատ. Եւ նըմանք լինին  
Բազում անգամ:

Կարէն. Բայց եթէ աղջիկ քրիստոնեայ  
Ընդդէմ աստուածոյն սիրիւր 'ի Տըրգատայ . . .

Տրդատ. Աստուած է և սէր, մի քններ առաւել:

Կարէն. Զգտեալ՝ առ կայսր պիտոյ է ուղարկել:

Տրդատ. Առաջ գտիցուք, յետ 'ի Վաղարշապատ,  
Որպէս ասէիր կայսրը է Տըրգատ.  
Բաւական իցէ քեզ:

# Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

## ԿԱՐԷՆ ՄԻՈՅՆ

Անահիտ տացէ,  
Թէ քեզ հնազանդիւ բաւական իցէ.  
Եւ զոր աայի խրատ՝ առնուլ կարէի.  
Ընդդէմ պատկերին սերտ սիրտ բերի.  
Զխարդ 'ի չըղթայս ազատ կաս, Կարէն,  
Եւ ամօթաբար կապիւլ յանձանօթէն  
Զքեզ թողուս. ձգեա զգեղն մահաբեր՝  
Զոր 'ի ներքս ընկալար. թէպէտ և պատկեր  
Ոչ իցէ խաբեբայ, զինչ կարես յուսալ  
Ի փափաքսն քո, եթէ սիրեցեալ  
Է կոյս 'ի Տըրգատայ և 'ի կայսերէ:  
Զխարդ և ծառայ՝ զոր տէր իւր սիրէ՝  
Համարձակի սիրել, թէպէտ արիւնակից  
Իցես Տըրգատայ: Ապա սիրողակից  
Նմա կարես անմեղ լինել: Յիշես  
Զերախտիսն նորա, և հատուցանես  
Զփոխարէն արքային այդպէս անարժան.  
Տոհմին՝ յորմէ բըղխես, նա և թէպէտ իշխան՝  
Մառայ ես. զինչ հնարս ունիս առ 'ի շարժել  
Զսիրտ Հռիփսիմէի, նմա հաճոյ լինել,  
Երկուց թագաւորաց սիրեցելոյն: Զարթիր,  
Լուսաւորեաց, կոյր. բաց զայս, ծանիր  
Ո՛ւր ընթանաս. ծանիմ: Իսկ բան լռեա,  
Քարոզես ընդ վայր, փութասցուք խնդրել.  
Առ յուսալ՝ սիրողին բաւական է սիրել:

Շարունակելի: